



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան

09/09/2021

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Վահե Ամիրխանյանը, Նարեկ Գալստյանը, Արման Գրիգորյանը, Արթուր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Անդրանիկ Նարինյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Տիգրան Ղազարյանը, Արմեն Պողոսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Վահագն Գևորգյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին **ո թ ո շ ու մ է՝**

1. Հաստատել 2021 թվականի սեպտեմբերի 09-ի N 07 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի թիվ 56 բնակարանն անհատույց օտարելու մասին.

2) Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխված համարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 56 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Վարդան Մնացյանի դիմումը և Արուսյան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի եզրակացությունը, Արուսյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի փետրվարի 25-ի N 25022019-07-0067 վկայական) Արուսյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 2-րդ շենքի 13.62 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 56 բնակարանն անհատույց օտարել Վարդան Մնացյանին և Նաիրա Մաթևոսյանին:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն և 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով «ՄՈՒԼՏԻ ԱՎՏՈՏՐԱՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2021 թվականի սեպտեմբերի 08-ի N Տ-527), Արուսյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1.«ՄՈՒԼՏԻ ԱՎՏՈՏՐԱՆԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2016 թվականի մարտի 31-ի N 31032016-07-0047 վկայական, կադաստրային համարը՝ 07-002-0086-0031) Արուսյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 1/50 հասցեում գտնվող 0.1725 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նշանակության հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/


Ավագանու անդամներ


ՆԻԿՈԼԱՅ ԱՐԱՎԱՄՅԱՆ 


ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱՅԱՆ 


ԼԵՎՈՆ ԺԱՄԿԱՐՅԱՆ 

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ 

ԳՈՌ ՂԱԼԵՉՅԱՆ 

ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 

ՍԱՐԳԻՍ ՉԱՏՅԱՆ 

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ 

Համայնքի ղեկավար

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ 

Նիստն արձանագրեց՝ Արուսյակ Առաքելյանը 